ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

N 1/3-01/3596
„22„ 09 2011թ.

ՀՀ, ք. Գյումրի, Վարդանանց հր. 1,
Հեռ. (+374 312), 3-46-05;
Հեռապատճեն (+374 312) 4-87-01;
Կայքը www.Gyumricity.am
Էլ.փոստ- gyumri@gyumri.am

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊՐՆ Ա.ԳԻՉԻՐՅԱՆԻՆ

*Հարգելի մարզպետ*

Ուղարկվում է Գյումրու քաղաքային համայնքի ավագանու 2011թվականի հուլիսի 20-ին կայացած N 10 նիստի NN 110 – 123 որոշումները:

Առդիր՝ 24 (քսանչորս) թերթից:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Բ.ԱԼԵՔՍԱՆՈՎ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
Մտից թիվ 6435-11
22 09 11 թ.

## ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 26-րդ մասերով՝

### ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հաստատել Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակի ներքոհիշյալ փոփոխությունները՝

1) Աշխատակազմի մոնտաժոր-օպերատորի աշխատավարձի դրույքաչափը սահմանել ամսական 110000 /մեկ հարյուր տասը հազար/ դրամ:
2) Աշխատակազմի ծրագրերի, տեղեկատվության և վերլուծության բաժնի համակարգչի օպերատորի աշխատավարձի դրույքաչափը սահմանել ամսական 80000 /ութսուն հազար/ դրամ:
3) Աշխատակազմի իրավաբանական բաժնի համակարգչի օպերատորի աշխատավարձի դրույքաչափը սահմանել ամսական 65000 /վաթսունհինգ հազար/ դրամ:
4) Քաղաքապետարանի տնտեսական մասի թվով վեց պահակի աշխատավարձերի դրույքաչափերը սահմանել ամսական 60000-ական /վաթսուն հազար/ դրամ:
5) Աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի թվով չորս կանաչապատող բանվորների աշխատավարձերի դրույքաչափերը սահմանել ամսական 70000-ական /յոթանասուն հազար/ դրամ:

2. Հաստատել Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակի ներքոհիշյալ լրացումները՝

1) Աշխատակազմի բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնում ավելացնել Վարդանանց հրապարակի պահակի մեկ հաստիք՝ դրույքաչափը 50000 /հիսուն հազար/ դրամ:
2) Աշխատակազմի բյուջեի եկամուտների հաշվառման բաժնում ավելացնել վարձավճար գանձող գործակալի երկու հաստիք՝ դրույքաչափերը 70000-ական /յոթանասուն հազար/ դրամ:
3) Աշխատակազմի կրթության բաժնում ավելացնել համակարգչի օպերատորի մեկ հաստիք՝ դրույքաչափը 50000 /հիսուն հազար/ դրամ:

3. Ուժը կորցրած ճանաչել Գյումրու քաղաքային համայնքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 16-ի «Գյումրու քաղաքային համայնքի ղեկավարի աշխատակազմի և բյուջետային հիմնարկների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակները և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 231-Ա որոշման 1-ին կետով հաստատված հաստիքացուցակում սույն որոշման 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերին համապատասխանող հաստիքների դրույքաչափերը:
4. Հանձնարարել ֆինանսական բաժնին /պետ Մ.Գրիգորյան/՝ բյուջետային դասակարգման համապատասխան հոդվածներում կատարել փոփոխություններ և այդ մասին տեղյակ պահել Գյումրու տեղական գանձապետական բաժանմունքին:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ՝ |
|---|---|---|
| | ՉԿԱ | ՉԿԱ |

Հ.ՊՈՂՈՍՅԱՆ

Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ

Ջ.ՋԱՐԳԱՐՅԱՆ

Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Մ.ՍԱՀԱԿՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Է.ԱՎԵՏԻՍՅԱՆ

20 հուլիսի 2011թ.
ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ

«20» հուլիսի 2011թ.
ք.Գյումրի

Արձանագրություն N 10

## ՈՐՈՇՈՒՄ N 122-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀՈՂԱՄԱՍԵՐ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրու քաղաքապետարան ներկայացվել է 21.01.2011թ. N 01/183-11 Շիրակի մարզպետի գրությունը, ,որով առաջարկվում է պետական սեփականություն հանդիսացող օբյեկտների զբաղեցրած հողամասերը հանձնել Հայաստանի Հանրապետությանը սեփականության իրավունքով:

Հարցադրումը ներկայացվել է Շիրակի մարզպետարան Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության կողմից: Տարածքային կառավարման նախարարության և Շիրակի մարզպետարանի կողմից պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի ներկայացված ցանկում ընդգրկված օբյեկտները զբաղեցնում են սպասարկման և պահպանման համար անհրաժեշտ հողամասեր անհատույց մշտական օգտագործման հիմքերով, որը համապատասխան կարգով արձանագրված է իրավունքների գրանցման վկայականներում:

Նկատի ունենալով, որ ներկայացրած օբյեկտները ներկայացնում են կրթական առողջապահական, սպորտային, մշակույթի և այլ պետական կազմակերպությունների կողմից օգտագործվող օբյեկտներ, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով, «հողային օրենսգրքի» 56-րդ և 89-րդ հոդվածներով և «Քաղաքաշինական օրենսգրքի» 605-րդ հոդվածով՝

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Համաձայնություն տալ Գյումրի քաղաքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող շենքերի և շինությունների կառուցապատման և սպասարկման համար օգտագործվող հողամասերը Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերելու առաջարկությանը, ցանկերը՝ համաձայն հավելված N 1-ի և հավելված N 2-ի:
2. Նվիրաբերման պայմանագրերի նոտարական վավերացման և իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարել հողօգտագործողների հաշվին:
3. Հավելված 1-ում նշված շենք-շինությունների պետական գրանցման վկայականներում գրանցված հողամասի ուրվագծի և անշարժ գույքի փոփոխման անհրաժեշտության դեպքում հողամասի նոր գլխավոր հատակագծի և այլ փաստաթղթերի ներկայացման պարտավորությունները կրում է հողօգտագործող կողմը:

4. Հավելված 2-ով ներկայացրած, իրավունքների պետական գրանցում չունեցող, օբյեկտների սպասարկման և պահպանման փաստացի օգտագործվող հողամասերի նվիրաբերությունն իրականացնել հողօգտագործողների կողմից հողամասերի ճշգրտված գլխավոր հատակագծերի ներկայացումից հետո:
5. Օրենքով նախատեսված համայնքային բյուջե վճարումները կատարում է հողօգտագործողները:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ — Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝
ԿՈՂՄ

ԴԵՄ
ՉԿԱ

ՁԵՌՆՊԱՀ՝
ՉԿԱ

Հ.ՊՈՂՈՍՅԱՆ

Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ

Չ.ՁԱՐԳԱՐՅԱՆ

Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Մ.ՍԱՀԱԿՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Է.ԱՎԵՏԻՍՅԱՆ

20 հուլիսի 2011թ.
ք. Գյումրի

Հավելված 1
Գյումրու քաղաքային
համայնքի ավագանու
2011թ. հուլիսի 20-ի
N 122-Ա որոշման

# ՑԱՆԿ

Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի վրա գտնվող պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի

| Հ/Հ | ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՑԵՆ | ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀՈՂԱՄԱՍԻ ՉԱՓԵՐԸ | ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆ | ՀՈՂԱՄԱՍԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԸ ՀԱՄԱՁԱՅՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԿԱՆԻ | ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| 1 | Երեխաների տան գլխավոր մասնաշենք | Շիրակի մարզ,Գյումրի Թամանյան 17 | 3305,5 | Օգտ. | Գյումրու համայնք | |
| 2 | Թ.1 հրշ Փրկ. Ջոկատի շենք | Շիրակի մարզ, Գյումրի Ջիվանու 64 | 930,66 | Օգտ. | Գյումրու համայնք | |
| 3 | Թ.1 հրշ Փրկ. Ջոկատի շենք | Շիրակի մարզ, Գյումրի Ջիվանու 64/1 | 154,13 | Օգտ. | Գյումրու համայնք | |
| 4 | Շենք | Շիրակի մարզ, Գյումրի Մ.Խորենացի 21 | 5717,82 | Օգտ. | Գյումրու համայնք | |
| 5 | Հանրակացարանի շենք (ՀՊՏՀ) | Շիրակի մարզ, Գյումրի Վ.Սարգսյան32 | 10905,05 | Վարձ. | Գյումրու համայնք | |
| 6 | ՀՊՃՀ Գյումրու մ/ճ բ.1 | Շիրակի մարզ, Գյումրի Մ.Մկրտչյան 2 | 7974 | Օգտ. | Գյումրու համայնք | |
| 7 | ՀՊՃՀ Գյումրու մ/ճ կաթսայատուն | Շիրակի մարզ, Գյումրի Մ.Մկրտչյան 2 | 86,4 | Օգտ. | Գյումրու համայնք | |
| 8 | Վարչական շենք | Շիրակի մարզ, Գյումրի Պողոսյան 58 | 2284,64 | Օգտ. | Գյումրու համայնք | |
| 9 | Վարչական շենք | Շիրակի մարզ, Գյումրի Կայարանամերձ հրապարակ 2 | 937,06 | Օգտ. | Գյումրու համայնք | |
| 10 | Թանգարանի շենք | Շիրակի մարզ, Գյումրի Հաղթանակի 47 | 2713 | Վարձ. | Գյումրու համայնք | |
| 11 | Մարզախաղատարանի վարչական շենք | Շիրակի մարզ, Գյումրի Գ.Նժդեհի 16 | 2585,69 | Օգտ. | Գյումրու համայնք | |
| 12 | Թիվ 41 դպրոցի շենք | Շիրակի մարզ, Գյումրի Չարենցի 4 | 20991 | Օգտ. | Գյումրու համայնք | |
| 13 | Թ.33 դպրոցի շենք | Շիրակի մարզ, Գյումրի Կիրովականյան 21 | 5400 | Օգտ. | Գյումրու համայնք | |
| 14 | Թ.30 դպրոցի շենք | Շիրակի մարզ, Գյումրի Շչեդրինի 7 | 9065,24 | Օգտ. | Գյումրու համայնք | |
| 15 | Պարպայ փարժարանի շենք | Շիրակի մարզ, Գյումրի Մ.Մկրտչյանի 47 | 5228,01 | Օգտ. | Գյումրու համայնք | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 16 | Թ.29 դպրոցի շենք | Շիրակի մարզ, Գյումրի Մանուշյան 7 | 10587,5 | | Օգտ. | Գյումրու համայնք | |
| 17 | Թ.7 դպրոցի շենք | Շիրակի մարզ, Ա.Մանուկյան 4 | 2872,25 | | Օգտ. | Գյումրու համայնք | |
| 18 | Թ.8 դպրոցի շենք | Շիրակի մարզ, Գյումրի Լիսինյան 6 | 7393,21 | | Օգտ. | Գյումրու համայնք | |
| 19 | Թ.40 դպրոցի շենք | Շիրակի մարզ, Գյումրի Ֆ.Վերֆելի 4 | 2005,37 | | Օգտ. | Գյումրու համայնք | |
| 20 | Թ.38 դպրոցի շենք | Շիրակի մարզ, Գյումրի Բուլվարային 7 | 5667,78 | | Օգտ. | Գյումրու համայնք | |
| 21 | Թ.11 դպրոցի շենք | Շիրակի մարզ, Գյումրի Անի թաղ. | 17869 | | Օգտ. | Գյումրու համայնք | |
| 22 | Թ.3 հատուկ դպրոցի շենք | Շիրակի մարզ, Գյումրի Խրիմյան Հայրիկ 1 թաղ. 56 | 3987 | | Օգտ. | Գյումրու համայնք | |
| 23 | Թ.20 դպրոցի շենք | Շիրակի մարզ,Գյումրի Թետչերի 1 | 15483,4 | | Օգտ. | Գյումրու համայնք | |
| 24 | Թ.4 դպրոցի շենք | Շիրակի մարզ, Գյումրի Կամոյի 173 | 10783,06 | | Օգտ. | Գյումրու համայնք | |
| 25 | Թ.5 դպրոցի շենք | Շիրակի մարզ,Գյումրի Ս.Մատնիշյան 301 | 3368,46 | | Օգտ. | Գյումրու համայնք | |
| 26 | Մարզպետարանի առողջապահության մասնաշենք | Շիրակի մարզ, Գյումրի Շչեդրինի 5/3 | 496 | | Օգտ. | Գյումրու համայնք | |
| 27 | Մարզպետարանի առողջապահության մասնաշենք | Շիրակի մարզ, Գյումրի Շչեդրինի 5/2 | 286 | | Օգտ. | Գյումրու համայնք | |
| 28 | Թ.44 դպրոցի շենք | Շիրակի մարզ, Գյումրի Արևելյան 7 | 1050,5 | | Օգտ. | Գյումրու համայնք | |
| 29 | Թ.24 դպրոցի շենք | Շիրակի մարզ, Գյումրի Շիրակացու 173 | 4479,8 | | Օգտ. | Գյումրու համայնք | |
| 30 | Թ.15 դպրոցի շենք | Շիրակի մարզ, Գյումրի Եսայան 34ա | 7591,31 | | Օգտ. | Գյումրու համայնք | |
| 31 | Թ.17 դպրոցի շենք | Շիրակի մարզ, Գյումրի Շչերբինայի 4 | 2963,62 | | Օգտ. | Գյումրու համայնք | |
| 32 | Թ.18 դպրոցի շենք | Շիրակի մարզ, Գյումրի Լազոյի 2 | 6828,25 | | Օգտ. | Գյումրու համայնք | |
| 33 | Վան հյուրատան տնակ | Շիրակի մարզ, Գյումրի Խրիմյան Հայրիկի 19 | 8630,04 | | Օգտ. | Գյումրու համայնք | |
| 34 | Թ.9 դպրոցի շենք | Շիրակի մարզ, Գյումրի Հաղթանակի 40 | 3066,3 | | Օգտ. | Գյումրու համայնք | |
| 35 | Թ.6 դպրոցի շենք | Շիրակի մարզ, Գյումրի Թումանյան 20 | 3013,35 | | Օգտ. | Գյումրու համայնք | |
| 36 | Թիվ 1 կրթահամալիրի շենք | Շիրակի մարզ, Գյումրի Անեմյան 40 | 36447 | | Վարձ. | Գյումրու համայնք | |
| 37 | Թ.2 դպրոցի շենք | Շիրակի մարզ, Գյումրի Գ.Նժդեհի 11 | 2097,97 | | Օգտ. | Գյումրու համայնք | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 38 | Վարժարանի շենք | Շիրակի մարզ, Գյումրի Սարգսյան 15 | 3745,47 | Օգտ. | Գյումրու համայնք | |
| 39 | Ակադեմիական վարժարանի շենք | Շիրակի մարզ, Գյումրի Սարգսյան 13 | 6700 | Օգտ. | Գյումրու համայնք | |
| 40 | Ավագ դպրոցի շենք | Շիրակի մարզ, Գյումրի Այգաբաց 3-րդ շ 36 | 13104 | Օգտ. | Գյումրու համայնք | |
| 41 | Թ.10 դպրոցի շենք | Շիրակի մարզ, Գյումրի Գորկու 77 | 4423 | Օգտ. | Գյումրու համայնք | |
| 42 | Թ.42 դպրոցի շենք | Շիրակի մարզ, Գյումրի Մուշ-2 թաղ. | 4306 | Օգտ. | Գյումրու համայնք | |
| 43 | Թ.3 ուսումնարանի շենք | Շիրակի մարզ, Գյումրի Սպանդարյան 84 | 989,54 | Օգտ. | Գյումրու համայնք | |
| 44 | Թ.28 դպրոցի շենք | Շիրակի մարզ, Գյումրի Երևանյան խճ.91 | 3242,39 | Օգտ. | Գյումրու համայնք | |
| 45 | Թ.26 դպրոցի շենք | Շիրակի մարզ, Գյումրի Տիգրան Մեծի 27 | 3330 | Օգտ. | Գյումրու համայնք | |
| 46 | Թ.25 դպրոցի շենք | Շիրակի մարզ, Գյումրի Պուշկինի 101 | 2305,45 | Օգտ. | Գյումրու համայնք | |
| 47 | Թ.37 դպրոցի շենք | Շիրակի մարզ, Գյումրի Չարենցի 12 | 1,553872 | Օգտ. | Գյումրու համայնք | |
| 48 | Թ.19 դպրոցի շենք | Շիրակի մարզ, Գյումրի Վ.Սարգսյանի 13 | 6700 | Օգտ. | Գյումրու համայնք | |

Քաղաքաշինության, շինարարության և
անշարժ գույքի կադաստրի բաժնի պետ

Ռ.Հակոբջանյան

Հավելված 2
Գյումրու քաղաքային
համայնքի ավագանու
2011թ. հուլիսի 20-ի
N 122-Ա որոշման

# Ցանկ

## Գյումրի քաղաքում գտնվող պետական սեփականություն հանդիսացող անշարժ գույքի, որոնց կողմից զբաղեցրած հողամասերը հանդիսանում են համայնքային սեփականություն

| Հ/Հ | Հասցեն | Սեփականության վկայականի համարը գրանցման համարը | Հողամասի չափը /հա/ | Հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման առկայությունը | Հողամասի սեփականատերը համաձայն սեփականության իրավունքի վկայականի |
|---|---|---|---|---|---|
| 1 | Ճեմչերի 6/1 /«Գյումրիի մանկապատ.համալիր մարզ.»/ | 2298698 / 05.04.07 | 0.10349 | օգտ | համայնքային |
| 2 | Ղարիբջանյան 28 /«Վաչագան» Դ/Զ դեղատուն/ | 2409271 / 16.08.07 | 0.014242 | օգտ | համայնքային |
| 3 | Դ. Ղուկասյան 30 /«Գյումրու Կարա-Մուրզայի անվ. պետական երաժշտական քոլեջ» ՊՈԱԿ/ | 2509236 / 28.06.08 | 0.06298 | օգտ | համայնքային |
| 4 | Ղուկասյան 30 /«Գյումրու թիվ 2 արհեստ.ուս.» ՊՈԱԿ/ | 2020180 / 29.08.06 | 0.110333 | օգտ | համայնքային |
| 5 | Տիգրան Մեծի 29/2 | 2647921 / 22.01.09 | 0.234778 | օգտ | համայնքային |
| 6 | Վ.Սարգսյան 28 /«Գյումրու պետ.մանկավարժ.քոլեջ»/ | 1307965 / 16.12.03 | 0.154223 | օգտ | համայնքային |
| 7 | Վ.Սարգսյան 28/2 /կաթսայատուն / | 2400857 / 01.09.09 | 0.004736 | օգտ | համայնքային |
| 8 | Վ. Սարգսյան 28/1 / ֆիզկուլտ.դահլիճ / | 1307968 / 16.12.03 | 0.020812 | օգտ | համայնքային |
| 9 | Մանուշյան 5 /նախկ.Խանջյան 29 /նախկ.«Գյումրու թիվ 29 միջն.դպրոց» ՊՈԱԿ-ին ամրացված արհեստանոցի շենք/ Ազգային արխիվ | 2473201 / 06.06.08 | 0.063 | օգտ | համայնքային |
| 10 | Թամանյան 17 /«Գյումրու «Երեխաների տուն»» ՊՈԱԿ/ | 2017640 / 07.03.06 /վերագր. 2008թ./ | 0.33055 | մշտ. օգտ | համայնքային |
| 11 | Վ.Սարգսյան 5ա /«Սեյսմիկ պաշտպ.հյուսիս.ծառայ.»/ | 2421149 / 16.10.07 /վերագր. 2008թ./ | 0.239215 | օգտ | համայնքային |
| 12 | Գ. Նժդեհի 12 /«Սեյսմիկ պաշտպ.հյուսիս.ծառայ.» / | 431625 / 07.04.03 /վերագր. 2008թ./ | 0.161273 | վարձակալ | համայնքային |
| 13 | Տիգրան Մեծի 29/«Գյումրու պետ. տեխնիկ.քոլեջ»/ | 2647920 / 22.01.09 | 0.347504 | օգտ | համայնքային |
| 14 | Տիգրան Մեծի 25 /«Գյումրու պետ. տեխնիկ.քոլեջ»/ | 1307828 / 04.12.03 /վերագր. 2008թ./ | 0.100858 | օգտ | համայնքային |
| 15 | «Գյումրու Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ» ՊՈԱԿ-ին ամրացված | | | | |
| 16 | Կամոյի 173 /թիվ 4 միջն.դպրոց/ | 519708 / 28.04.05 /վերագր. է 2010թ./ | 1.078306 | օգտագործ | համայնքային |
| 17 | Թումանյան 20 /թիվ 6 միջն.դպրոց/ | 2269491 / 08.12.06 /վերագր. է 2010թ./ | 0.301335 | օգտագործ | համայնքային |
| 18 | Ալեք Մանուկյան 4 /թիվ 7 միջն.դպրոց/ | 2419011 / 27.08.07 | 0.287225 | օգտ | համայնքային |
| 19 | Հաղթանակի 40 /թիվ 9 միջն.դպրոց/ | 2422699 / 20.03.08 | 0.30663 | օգտ | համայնքային |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 25 | Թեւոսյանի 1 /թիվ 20 միջն.դպրոց/ | 519671 / 22.04.05 *Վերագր. է 2010թ./* | 1.54834 | օգտագործ | համայնքային |
| 26 | Շիրակացի 173 /թիվ 24 միջն.դպրոց/ | 0109868 / 19.05.2000 */Վերագր. է 2010թ./* | 0.44798 | օգտագործ | համայնքային |
| 27 | Տիգրան Մեծի 27 /թիվ 26 միջն.դպրոց/ | 2269931 / 12.01.07 */Վերագր. է 2010թ./* | 0.333 | օգտագործ | համայնքային |
| 28 | Երևանյան խճ. 91 /թիվ 28 միջն.դպրոց/ | 2307959 / 16.05.07 */Վերագր. է 2010թ./* | 0,3242.39 | օգտագործ | համայնքային |
| 29 | Մանուշյան 7 /թիվ 29 միջն.դպրոց/ | 2565580 / 06.07.09 | 1.05875 | օգտ | համայնքային |
| 30 | Շչեդրինի 7 /թիվ 30 միջն.դպրոց/ | 2540362 / 14.11.08 | 0.906524 | օգտ | համայնքային |
| 31 | Խրիմյան Հայրիկ 1 բաղ. /թիվ 31միջն.դպրոց/ | 2423476 / 19.12.08 | 0.95 | օգտ | համայնքային |
| 32 | Կիրովականյան 21 /թիվ 33 միջն.դպրոց/ | 2422700 / 24.10.07 | 0.54 | օգտ | համայնքային |
| 33 | Բուլվարային 7 /թիվ 38 միջն.դպրոց/ | 2422703 / 24.10.07 */Վերագր. է 2010թ./* | 0.566778 | օգտ | համայնքային |
| 34 | Այգաբաց 3 շարք. թ. 36 /թ. 45 ավագ դպր/թ.1 գիշերօթ/ | 2027989 / 30.11.06 */Վերագր. է 2010թ./* | 1.3104 | օգտագործ | համայնքային |
| 35 | Մ. Մկրտչյան 47 /«Օյունջյան» դպրոց վարժարան/ | 1123578 / 02.12.04 */Վերագր. է 2010թ./* | 0.522801 | օգտ | համայնքային |
| 36 | Վ.Սարգսյան 28/2 /Դաբսայատուն / | 2400857 / 01.09.09 | 0.004736 | օգտ | համայնքային |
| 37 | Վ.Սարգսյան 5ա /«Սեյսմիկ պաշտպ.հյուսիս.ծառութ.»/ | 2421149 / 16.10.07 /Վերագր. 2008թ./ | 0.239215 | օգտ | համայնքային |
| 38 | Գ. Նժդեհի 12 /«Սեյսմիկ պաշտպ.հյուսիս.ծառութ.» / | 431625 / 07.04.03 /Վերագր. 2008թ./ | 0.161273 | վարձակալ | համայնքային |
| 39 | Տիգրան Մեծի 29/«Գյումրու պետ. տեխնիկ.քոլեջ»/ | 2647920 / 22.01.09 | 0.347504 | օգտ | համայնքային |
| 40 | Շիրակի մարզ Գյումրի Երևանյան խճ., 18 Տուն-ինտերնատի 2-րդ մասնաշենք | | | | համայնքային |
| 41 | Շիրակի մարզ Գյումրի Երևանյան խճ., 18Տուն-ինտերնատի 3-րդ մասնաշենք | | | | համայնքային |
| 42 | Շիրակի մարզ Գյումրի Երևանյան խճ., 18Տուն-ինտերնատի 4-րդ մասնաշենք | | | | համայնքային |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 43 | Շիրակի մարզ Գյումրի Երևանյան խճ., 18Տուն-ինտերնատի օժանդակ մասնաշենք | | | | համայնքային |
| 44 | Շիրակի մարզ Գյումրի Երևանյան խճ., 18Տուն-ինտերնատի ճաշարանային մասնաշենք | | | | համայնքային |
| 45 | Շիրակի մարզ Գյումրի Երևանյան խճ., 18Տուն-ինտերնատի լվացքատան մասնաշենք | | | | համայնքային |
| 46 | Շիրակի մարզ Գյումրի Երևանյան խճ., 18 Տուն-ինտերնատի ավտոտնակային մասնաշենք | | | | համայնքային |
| 47 | Շիրակի մարզ Գյումրի Երևանյան խճ., 18 Տուն-ինտերնատի ավտոտնակային մասնաշենք | | | | համայնքային |
| 48 | Շիրակի մարզ Գյումրի Երևանյան խճ., 18Տուն-ինտերնատի ավտոտնակային մասնաշենք | | | | համայնքային |

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ

ԲԱԺՆԻ ՊԵՏ Ռ.ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ

« 20 » հուլիսի 2011թ. Արձանագրություն N 10
ք.Գյումրի

# ՈՐՈՇՈՒՄ N 121 -Ա

**ԲՈՒԼՎԱՐԱՅԻՆ ՓՈՂՈՑԻ N 51/5 ՀԱՍՑԵԻ ԿԱԹՍԱՅԱՍՏԱՆ, ՃԱՇԱՐԱՆԻ, ՊԱՀԵՍՏԻ, ՏՎՏ-Ի ԵՎ ՊԱՐՍՊԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ**

Գյումրու համայնքի սեփականություն հանդիսացող Բուլվարային փողոցի N 51/5 հասցեի 395.74քմ ընդհանուր մակերեսով կաթսայատան, ճաշարանի, պահեստի, ՏՎՏ-ի և պարսպի շինությունները (սեփականության վկայական 2803635), իրենց զբաղեցրած 6775.46քմ հողամասով, նախկինում հանդիսացել են Բուլվարային փողոցի N 51 հասցեի ուղևորատար ավտոտրանսպորտային ձեռնարկության մասը կազմող շինություններ, որոնք իրենց նպատակային նշանակությանը չեն օգտագործվել և համայնքի կողմից գնելուց հետո էլ այն հնարավոր չէր վերականգնել:

Ի նկատի ունենալով, որ շինությունները գնելու և տարբեր նշանակության օգտագործելու նպատակով ստացվել են առաջարկություններ և հաշվի առնելով, որ երկար տարիներ շինությունները չեն օգտագործվել և վերականգնման համար անհրաժեշտ միջոցներ տեղական բյուջեն չունի, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2002թ. մայիսի 7-ի օրենքի 16-րդ հոդվածի 20 –րդ կետով՝

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Թույլատրել համայնքի սեփականությունը հանդիսացող Բուլվարային փողոցի N 51/5 հասցեի 395.74քմ ընդհանուր մակերեսով շինությունները (կաթսայատուն 70.20քմ, ճաշարան 46.44քմ, պահեստ 17.94քմ, ՏՎՏ 228.09քմ, պարիսպ 33.07քմ) իրենց զբաղեցրած 6775.46քմ հողամասով օտարել աճուրդային եղանակով:
2. Ելնելով «Գագեմա» ՍՊԸ-ի կողմից **18 հուլիսի 2011թ.** N 74 հաշվետվության եզրակացությամբ գնահատված շուկայական արժեքից օտարման մեկնարկային գին սահմանել 395.74քմ շինությունների համար 2 900 000 (երկու միլիոն ինը հարյուր հազար) դրամ, իսկ 6775.46քմ հողամասի համար 8 600 000 (ութ միլիոն վեց հարյուր հազար) դրամ:
3. Օբյեկտի առուծախի հետ կապված ծախսերը կատարել գնորդի հաշվին:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ՝ |
|---|---|---|
| | ՉԿԱ | ՉԿԱ |

Հ.ՊՈՂՈՍՅԱՆ

Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ

Չ.ԶԱՐԳԱՐՅԱՆ

Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Մ.ՍԱՀԱԿՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Է.ԱՎԵՏԻՍՅԱՆ

20 հուլիսի 2011թ.
ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ

« 20 » հուլիսի 2011թ.
ք.Գյումրի

Արձանագրություն N 10

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 120 -Ա

## ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010Թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 8-Ի N 203-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընդունելով աճուրդային հանձնաժողովի 2011թ. հուլիսի 20-ի N 41 արձանագրությամբ ներկայացված առաջարկությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 69-րդ հոդվածի 1-ին կետով, 68-րդ հոդվածի 7-րդ կետի 2-րդ պարբերությամբ, Հայաստանի Հանրապետության «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին կետով՝

## Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Գյումրու քաղաքային համայնքի ավագանու 2010թ. նոյեմբերի 8-ի «Աճուրդով օտարելու նպատակով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասն առանձնացնելու և աճուրդի մեկնարկային գներ հաստատելու մասին» N 203-Ա որոշմամբ հաստատված ցուցակի 2-րդ և 5-րդ կետերը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 5 | Կոմինտերնի փող. 2 շարք 8<br>9-րդ գոտի | Ա10-134<br>210.0 | բնակավայրերի բնակելի կառուցապատում | անհատական բնակելի տան կառուցում | 530 000<br>(հինգ հարյուր երեսուն հազար) |
| 2 | Ղուկասյան փող. 10 շարք 1/1<br>9-րդ գոտի | Ա10-131<br>275.0 | բնակավայրերի բնակելի կառուցապատում | անհատական բնակելի տան կառուցում | 700 000<br>(յոթ հարյուր հազար) |

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝
ԿՈՂՄ

ԴԵՄ
ՉԿԱ

ՁԵՌՆՊԱՀ՝
ՉԿԱ

Հ.ՊՈՂՈՍՅԱՆ

Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ

Չ.ԶԱՐԳԱՐՅԱՆ

Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Մ.ՍԱՀԱԿՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Է.ԱՎԵՏԻՍՅԱՆ

20 հուլիսի 2011թ.
ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ

Արձանագրություն N 10

« 20 » հուլիսի 2011թ.
ք.Գյումրի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 119 - Ա

## ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011Թ. ՄԱՅԻՍԻ 31-Ի «ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ » N 81-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրու քաղաքային համայնքի ավագանու 2011թ. մայիսի 31-ի «Աճուրդով օտարելու նպատակով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը առանձնացնելու և աճուրդի մեկնարկային գներ հաստատելու մասին» N81-Ա որոշմամբ հաստատված ցուցակի 10-րդ տողով հաստատվել է Աքարբեկյան փողոցի N 18/3 հասցեի 55.25քառ.մ առանձնացված հողամասի մեկնարկային գինը՝ 450 000 (չորս հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ:

Հողամասի աճուրդով օտարման հայտարարությունը տրվել է մեկ անգամ և հայտ չներկայացնելու պատճառով չի կայացել:

Ընդունելով աճուրդային հանձնաժողովի **2011թ. հուլիսի 18-ի N 40** արձանագրությամբ ներկայացված առաջարկությունը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 69-րդ հոդվածի 1-ին կետով, 68-րդ հոդվածի 7-րդ կետի 2-րդ պարբերությամբ, Հայաստանի Հանրապետության «Հրապարակային սակարկությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին կետով՝

## Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Գյումրու քաղաքային համայնքի ավագանու 2011թ. մայիսի 31-ի «Աճուրդով օտարելու նպատակով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը առանձնացնելու և աճուրդի մեկնարկային գներ հաստատելու մասին» N 81-Ա որոշմամբ հաստատված ցուցակի 10-րդ կետն ամբողջությամբ շարադրել հետևյալ խմբագրությամբ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 10 | Աքարբեկյան փող. 18/3<br>8-րդ գոտի | Ա՜11-0107<br>55.25 | բնակավայրերի բնակելի կառուցապատում | անհատական բնակելի տան կառուցում | 400 000<br>չորս հարյուր հազար |

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ՝ |
|---|---|---|
| | ՉԿԱ | ՉԿԱ |

Հ.ՊՈՂՈՍՅԱՆ

Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ

Չ.ԶԱՐԳԱՐՅԱՆ

Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Մ.ՍԱՀԱԿՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Է.ԱՎԵՏԻՍՅԱՆ

20 հուլիսի 2011թ.
ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ

«20» հուլիսի 2011թ.
ք.Գյումրի

Արձանագրություն N 10

# ՈՐՈՇՈՒՄ N 118 -Ա

## ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 67-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով Գյումրու քաղաքապետի 2011**թվականի հուլիսի 20-ի** «Համայնքային սեփականություն հանդիսացող հողերից աճուրդային կարգով օտարելու համար հողամասեր առանձնացնելու մասին» N 2964-Ա որոշմամբ առաջարկված հողամասերի մեկնարկային գները՝

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել՝ Գյումրու քաղաքային համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, առանձնացված հողամասերի աճուրդային կարգով օտարելու նպատակով մեկնարկային գների ցուցակը՝ համաձայն հավելվածի:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ — Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ՝ |
|---|---|---|
| | ՉԿԱ | ՉԿԱ |

Հ.ՊՈՂՈՍՅԱՆ

Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ

Չ.ԶԱՐԳԱՐՅԱՆ

Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Մ.ՍԱՀԱԿՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Է.ԱՎԵՏԻՍՅԱՆ

20 հուլիսի 2011թ.
ք. Գյումրի

Հավելված՝
Գյումրու քաղաքային
համայնքի ավագանու
2011թ. հուլիսի 20 - ի
N 10 նիստի N 118-Ա որոշման

# Ց Ու Ց Ա Կ

Գյումրու քաղաքային համայնքի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, առանձնացված հողամասերի աճուրդային կարգով օտարելու նպատակով մեկնարկային գների

| Հ/Հ | Հողամասի հասցեն /գտնվելու վայրը/ տարածագնահատման գոտին | Ծածկագիրը Մակերեսը՝ քառ.մ | Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը | Հողամասի օգտագործման նպատակը | Հաստատված մեկնարկային գինը /դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Հ.Սարգսյան փող. 4 նրբ. 7/3<br>9-րդ գոտի | Ա<11-0156<br>133.14 | բնակավայրերի բնակելի կառուցապատում | անհատական բնակելի տան կառուցում | 466 000<br>չորս հարյուր վաթսունվեց հազար |
| 2 | Հ.Սարգսյան փող. 3/10<br>9-րդ գոտի | Ա<11-0147<br>225.0 | բնակավայրերի բնակելի կառուցապատում | անհատական բնակելի տան կառուցում | 810 000<br>ութ հարյուր տասը հազար |
| 3 | Օ.Կոշևոյ փող. 2/6<br>11-րդ գոտի | Ա<11-0151<br>658.57 | բնակավայրերի բնակելի կառուցապատում | անհատական բնակելի տան կառուցում | 1 450 000<br>մեկ միլիոն չորս հարյուր հիսուն հազար |
| 4 | Շարա Տալյան փող. 11/7<br>9-րդ գոտի | Ա<11-0155<br>360.0 | բնակավայրերի բնակելի կառուցապատում · | անհատական բնակելի տան կառուցում | 1 440 000<br>մեկ միլիոն չորս հարյուր քառասուն հազար |
| 5 | «Մուշ-2» թաղ. 4/60<br>11-րդ գոտի | Ա<11-0119<br>60.0 | բնակավայրերի խառը կառուցապատում | առևտրի և սպասարկման օբյեկտի կառուցում | 180 000<br>մեկ հարյուր ութսուն հազար |
| 6 | «Մուշ-2» թաղ. 4/61<br>11-րդ գոտի | Ա<11-0120<br>60.0 | բնակավայրերի խառը կառուցապատում | առևտրի և սպասարկման օբյեկտի կառուցում | 180 000<br>մեկ հարյուր ութսուն հազար |
| 7 | «Մուշ-2» թաղ. 15/13<br>11-րդ գոտի | Ա<11-0157<br>3500.0 | բնակավայրերի բնակելի կառուցապատում | բնակելի կառուցապատում իրականացնելու համար | 7 700 000<br>յոթ միլիոն յոթ հարյուր հազար |
| 8 | «Մուշ-2» թաղ. 15/12<br>11-րդ գոտի | Ա<11-0158<br>5000.0 | բնակավայրերի բնակելի կառուցապատում | բնակելի կառուցապատում իրականացնելու համար | 11 000 000<br>տասնմեկ միլիոն |
| 9 | Թբիլիսյան խճ. 3 թաղ. 5/1<br>10-րդ գոտի | Ա<11-0131<br>204.0 | բնակավայրերի խառը կառուցապատում | անհատական բնակելի տան կառուցում | 694 000<br>վեց հարյուր իննսունչորս հազար |
| 10 | Վ.Սարգսյան փող. 15/7<br>11-րդ գոտի | Ա<11-0154<br>300.0 | բնակավայրերի բնակելի կառուցապատում | անհատական բնակելի տան կառուցում | 630 000<br>վեց հարյուր երեսուն հազար |
| 11 | Անտառավան փող. 3 թաղ. 51/1<br>10-րդ գոտի | Ա<11-0159<br>56.16 | բնակավայրերի բնակելի կառուցապատում | անհատական բնակելի տան կառուցում | 169 000<br>մեկ հարյուր վաթսունինը հազար |
| 12 | Մառյան փող. 216/2<br>8-րդ գոտի | Ա<11-0160<br>221.0 | բնակավայրերի բնակելի կառուցապատում | անհատական բնակելի տան կառուցում | 1 083 000<br>մեկ միլիոն ութսուներեք հազար |
| 13 | Շիրակացի փող. 64/8<br>9-րդ գոտի | Ա<11-0140<br>68.73 | բնակավայրերի բնակելի կառուցապատում | անհատական բնակելի տան կառուցում | 380 000<br>երեք հարյուր ութսուն հազար |
| 14 | Խանջյան փող. 1/9<br>9-րդ գոտի | Ա<11-0165<br>100.1 | բնակավայրերի բնակելի կառուցապատում | անհատական բնակելի տան կառուցում | 400 000<br>չորս հարյուր հազար |
| 15 | Ալ.Մանուկյան փող. 23/1<br>9-րդ գոտի | Ա<11-0164<br>43.75 | բնակավայրերի բնակելի կառուցապատում | անհատական բնակելի տան կառուցում | 200 000<br>երկու հարյուր հազար |
| 16 | Օդանավակայան 3 թաղ. 9/2<br>11-րդ գոտի | Ա<11-0166<br>664.3 | բնակավայրերի բնակելի կառուցապատում | անհատական բնակելի տան կառուցում | 800 000<br>ութ հարյուր հազար |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 17 | Արագած փող. 16/4<br>8-րդ գոտի | Աշ11-0162<br>41.25 | բնակավայրերի հասարակական կառուցապատում | առևտրի և սպասարկման օբյեկտի կառուցում | 215 000<br>երկու հարյուր տասնհինգ հազար* |
| 18 | «Մուշ-2» թաղ. 4/63<br>11-րդ գոտի | Աշ11-0101<br>50.0 | բնակավայրերի խառը կառուցապատում | առևտրի և սպասարկման օբյեկտի կառուցում | 150 000<br>մեկ հարյուր հիսուն հազար |
| 19 | Գերցենի փող. 1/12<br>10-րդ գոտի | Աշ11-0167<br>400.0 | բնակավայրերի բնակելի կառուցապատում | անհատական բնակելի տան կառուցում | 900 000<br>ինը հարյուր հազար |
| 20 | Գ.Նժդեհի փող. 5/11<br>9-րդ գոտի | Աշ11-0163<br>666.20 | բնակավայրերի հասարակական կառուցապատում | բարեկարգում իրականացնելու նպատակով | 2 665 000<br>երկու միլիոն վեց հարյուր վաթսունհինգ հազար |

Քաղաքաշինության, շինարարության և
անշարժ գույքի կադաստրի բաժնի պետ Ռ.Հակոբջանյան

Կատարող՝
Վ.Ճախոյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ

Արձանագրություն N 10

« 20 » հուլիսի 2011թ.
ք.Գյումրի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 117 -Ա

## ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԹՎՈՎ 5 ԱՆՁԱՆՑ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՅՑ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրու քաղաքապետին են դիմել սոցիալապես անապահով՝ թվով 5 անձիք դրամական օգնություն ստանալու խնդրանքով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով և հիմք ընդունելով դիմումները՝

## Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Թվով 5 անձանց՝ ցուցակը համաձայն հավելվածի Գյումրու քաղաքապետարանի բյուջեի այլ ծախսերից կանխիկ հատկացնել ընդամենը 185000/ մեկ հարյուր ութսունհինգ հազար / դրամ օգնություն:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

| ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝ | | |
|---|---|---|
| ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ՝ |
| | ՉԿԱ | ՉԿԱ |

Հ.ՊՈՂՈՍՅԱՆ

Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ

Չ.ԶԱՐԳԱՐՅԱՆ

Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Մ.ՍԱՀԱԿՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Է.ԱՎԵՏԻՍՅԱՆ

20 հուլիսի 2011թ.
ք. Գյումրի

Հավելված՝
Գյումրու քաղաքային
համայնքի ավագանու
2011թ. հուլիսի 20-ի
N 10 նիստի N 117-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ

Սոցիալապես անապահով՝ թվով 5 անձանց

| Հ/Հ | Անուն,Ազգանուն | Հասցե | Գումար /դրամ/ |
|---|---|---|---|
| 1 | Արմինե Խաչատրյան | | 30000 |
| 2 | Լուսինե Հարոյան | Անի թաղ.11 փ. 7 ա շենքի12 բն | 15000 |
| 3 | Ցոլակ Հարությունյան | Շահումյան փող. 188 ա | 70000 |
| 4 | Թամարա Եղիգարյան | Սևյան փող. տնակ 158/068 | 30000 |
| 5 | Կատյա Ղանդիլյան | Սելեկցիոն կայան | 40000 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | | 185000 |

ՖԻՆ.ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Մ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ

«_20_» _հուլիսի_ 2011թ.
ք.Գյումրի

Արձանագրություն N _10_

# ՈՐՈՇՈՒՄ N _116 -Ա_

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐԻ <<ՓՅՈՒՆԻԿ>> ՄԻՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրու քաղաքապետին է դիմել Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միության Գյումրու մասնաճյուղի պատասխանատուն, դրամական օգնություն հատկացնելու խնդրանքով՝ Ֆրանսիայի Սեն- Շամոն քաղաքի քաղաքապետի կողմից միությանը տրամադրվել է Ռենո մակնիշի միկրոավտոբուս, որի ձևակերպման ծախսերի համար անհրաժեշտ է 418830 /չորս հարյուր տասնութ հազար ութ հարյուր երեսուն / դրամ, ինչի համար չունեն համապատասխան միջոցներ:

Ելնելով հարցի անհրաժեշտությունից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ կետով՝

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միության Գյումրու մասնաճյուղին հատկացնել անկանխիկ դրամական օգնություն 418830 /չորս հարյուր տասնութ հազար ութ հարյուր երեսուն /դրամ:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝
ԿՈՂՄ

ԴԵՄ
ՉԿԱ

ՁԵՌՆՊԱՀ՝
ՉԿԱ

Հ.ՊՈՂՈՍՅԱՆ

Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ

Չ.ԶԱՐԳԱՐՅԱՆ

Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Մ.ՍԱՀԱԿՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Է.ԱՎԵՏԻՍՅԱՆ

20 հուլիսի 2011թ.
ք. Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ

---

«__20__» __հուլիսի__ 2011թ.                                                                 Արձանագրություն N _10_

ք.Գյումրի

# ՈՐՈՇՈՒՄ N _115 -Ա_

## ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ 2011Թ. ՀՈՒԼԻՍԻ 01-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԿԱԶՄՎԱԾ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի նոյեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 656 որոշման դրույթներով՝

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու քաղաքապետի կողմից 2011թ. հուլիսի 01-ի դրությամբ կազմված հողային հաշվեկշռին, ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի և սեփականության սուբյեկտների՝

1. Գյուղատնտեսական նշանակության հողեր 413,58 հա, որից վարելահող 88,43 հա, խոտհարք – հա, արոտ 323,87 հա և այլ հողեր – հա
2. Բնակավայրի հողեր 2711,83 հա, որից տնամերձ 359,76 հա, հասարակական 128,39 հա, խառը կառուցապատման 15,66 հա, ընդհանուր օգտագործման 377,03, այլ հողեր 1053,47 հա
3. Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր 366,71 հա
4. Էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր 423,02 հա
5. Հատուկ պահպանվող տարածքների հողեր 94,11 հա
6. Հատուկ նշանակության հողեր 256,69 հա
7. Անտառային հողեր 150,84 հա
8. Ջրային հողեր 150,84 հա
9. Ջրային հողեր 12,72 հա
10. Պահուստային հողեր – հա

Քաղաքացիների սեփականության հողեր 392,70 հա:
Իրավաբանական անձանց հողեր 66,11 հա:
Համայնքային սեփականության հողեր 3277,74 հա:
Պետական սեփականության հողեր 687,52 հա

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ                                                   Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝
ԿՈՂՄ                         ԴԵՄ                         ՁԵՌՆՊԱՀ՝
                             ՉԿԱ                         ՉԿԱ

Հ.ՊՈՂՈՍՅԱՆ

Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ

Չ.ԶԱՐԳԱՐՅԱՆ

Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Մ.ՍԱՀԱԿՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Է.ԱՎԵՏԻՍՅԱՆ

20 հուլիսի 2011թ.
ք. Գյումրի

Արձանագրություն N 10

« 20 » հուլիսի 2011թ.
ք.Գյումրի

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 114 -Ա

## ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՍԱՐԳՍՅԱՆ ՓՈՂ. 2-ՐԴ ՆՐԲ. ՏՈՒՆ 24 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԻՉ ԱՆԴՐԱՆԻԿ ՂԱՓԼԱՆՅԱՆԻ /ԱՆՁ. AA 0631824 ՏՐՎԱԾ 17.02.1997Թ. ԿՈՂՄԻՑ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՉՔԱՐ ՆՎԻՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԽԱՉՔԱՐԸ ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԸ ԻՏԱԼԻԱՅԻ ՊԱՎԻԱ ՔԱՂԱՔԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2010թվականի հոկտեմբերի 23-ին Գյումրի և Իտալիայի Պավիա քաղաքների միջև կնքվեց քույր քաղաքների ստեղծման համաձայնագիր:
Քույր քաղաքների մշակութային կապերը ամրապնդելու կապակցությամբ Գյումրու քաղաքապետարանը նախաձեռնեց Պավիա քաղաքին նվիրել հայկական խաչքար /նկարը կցվում է/ որը տեղադրվելու է Պավիա քաղաքի կենտրոնական այգում:

Գյումրի քաղաքի Սարգսյան փող., 2-րդ նրբ. տուն 24 հասցեի բնակիչ քանդակագործ Անդրանիկ Ղափլանյանը /անձ. AA 0631824 տրված 016, 17.02.1997թ.-17.02.2012թ., սոցիալական քարտ՝ 3405660360/ առաջարկեց Գյումրու քաղաքապետարանին նվիրել հայկական խաչքար /նկարը կցվում է, արժեքը՝ 825000 /ութ հարյուր քսանհինգ հազար/ դրամ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 5-րդ ենթակետով՝

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ընդունել Գյումրու Սարգսյան փող., 2-րդ նրբ. տուն 24 հասցեի բնակիչ քանդակագործ Անդրանիկ Ղափլանյանի հայկական խաչքար նվերը /նկարը կցվում է/ արժեք՝ 825000 /ութ հարյուր քսանհինգ հազար/ դրամ և համարել համայնքի սեփականությունը և կնքել նվիրատվության պայմանագիր:
2. Թույլատրել նվիրելու Գյումրու քաղաքապետարանի սեփականությունը հանդիսացող հայկական խաչքարը՝ արժեք՝ 825000 /ութ հարյուր քսանհինգ հազար/ դրամ Իտալիայի Պավիա քաղաքին և կնքել նվիրատվության պայմանագիր:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ՝ |
|---|---|---|
| | ՉԿԱ | ՉԿԱ |

Հ.ՊՈՂՈՍՅԱՆ
Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ
Զ.ԶԱՐԳԱՐՅԱՆ
Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
Մ.ՍԱՀԱԿՅԱՆ
Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ
Վ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
Է.ԱՎԵՏԻՍՅԱՆ

20 հուլիսի 2011թ.
ք. Գյումրի



«__20__» _hուլիսի_ 2011թ.
ք.Գյումրի

Արձանագրություն N _10_

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N _113 - Ա_

## ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆԻ ԽՃՈՒՂԻ N 3/11 ՀԱՍՑԵԻ 14313.84ՔԱՌ.Մ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԸՆԴԱՄԵՆԸ 1377.0ՔԱՌ.Մ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրու համայնքի սեփականություն հանդիսացող, Ղարիբջանյան խճուղի N 3/11 հասցեի հողամասը և շինությունները (սեփականության վկայական 2643298, տրված 2011թ. մայիսի 20-ին) մինչ երկրաշարժը օգտագործվել է գործադիր կոմիտեի տնտեսական կարիքների համար: Երկրաշարժից հետո այն իր նպատակին չի օգտագործվել և մնալով անօգտագործելի վքարվել է և առանց հիմնանորոգման այն հնարավոր չէ շահագործել:

Նկատի ունենալով վերոհիշյալը՝ ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով՝

### Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Թույլատրել համայնքի սեփականությունը հանդիսացող Ղարիբջանյան խճուղի N 3/11 հասցեի 1377.0քմ ընդհանուր մակերեսով (այդ թվում՝ գլխավոր մասնաշենք 1186.9քմ, պահեստ՝ 113.91քմ, կիսակառույցներ 76.19քմ) շենքն իր զբաղեցրած 14313.84քմ հողամասով օտարել աճուրդային եղանակով:
2. Ելնելով «Գազեմա» ՍՊԸ-ի կողմից 2011թ. հուլիսի 6-ի N 72 հաշվետվությամբ գնահատված շուկայական արժեքից, 1377.0քմ մակերեսով շինությունների համար օտարման մեկնարկային գին սահմանել 7000000 (յոթ միլիոն) դրամ, իսկ 14313.84քմ հողամասի համար 17000000 (տասնյոթ միլիոն) դրամ:
3. Շինությունների առուվաճառքի հետ կապված ծախսերը կատարել գնորդի հաշվին:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ — Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԿՈՂՄ

Հ.ՊՈՂՈՍՅԱՆ

Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ

Զ.ԶԱՐԳԱՐՅԱՆ

Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Մ.ՍԱՀԱԿՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Է.ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԴԵՄ

ՉԿԱ

ՁԵՌՆՊԱՀ՝

ՉԿԱ

20 հուլիսի 2011թ.
ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ

« 20 » հուլիսի 2011թ.
ք.Գյումրի

Արձանագրություն N 10

# ՈՐՈՇՈՒՄ N 112 -Ա

### ՏԻԳՐԱՆ ՄԵԾ ՓՈՂՈՑԻ 8 ՇԵՆՔ N 13/2 ՀԱՍՑԵԻ ՏԱՐԱԾՔԻ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Գյումրու համայնքի սեփականություն հանդիսացող Տիգրան Մեծ փող. շենք 8 N 13/2 հասցեի տարածքը (հիմք՝անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման 2408773 վկայական տրված 2011թ. ապրիլի 26-ին) զուրկ է կոմունալ հարմարություններից: Ժամանակակից նորմերին համապատասխան կոմունալ հարմարություններ ստեղծել հնարավոր չէ:

Ելնելով վերը նշվածից և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով՝

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Թույլատրել համայնքի սեփականություն հանդիսացող Տիգրան Մեծ փողոցի շենք 8 N 13/2 հասցեի 8.49քմ մակերեսով բնակարանն օտարել աճուրդային եղանակով:
2. Ելնելով «Գագեմա» ՍՊԸ-ի կողմից 2011թ. հունիսի 28-ի N 71 հաշվետվության եզրակացությամբ գնահատված շուկայական արժեքից 8.49քմ մակերեսով բնակարանի համար օտարման մեկնարկային գին սահմանել 95000 (իննսունհինգ հազար) դրամ:
3. Բնակարանի առուվաճառքի հետ կապված ծախսերը կատարել գնորդի հաշվին:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԿՈՂՄ

ԴԵՄ
ՉԿԱ

ՁԵՌՆՊԱՀ՝
ՉԿԱ

Հ.ՊՈՂՈՍՅԱՆ

Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ

Ջ.ՁԱՐԳԱՐՅԱՆ

Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Մ.ՍԱՀԱԿՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Է.ԱՎԵՏԻՍՅԱՆ

20 հուլիսի 2011թ.
ք. Գյումրի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
## ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ

« 20 » հուլիսի 2011թ. Արձանագրություն N 10
ք.Գյումրի

## ՈՐՈՇՈՒՄ N 111 -Ա

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Գյումրու համայնքը Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին» N 731-Ն որոշմամբ սահմանված կարգով ներքոհիշյալ շինությունների նկատմամբ ձեռք է բերել սեփականության իրավունք, որոնք ենթարկվել են պետական գրանցման:

Նկատի ունենալով, որ նշված շինությունների նկատմամբ պետք է կիրառվեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշման պահանջները՝ շինությունները ուղղակի վաճառքի միջոցով օտարվելու են տվյալ շինությունները կառուցողներին՝

**Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝**

1. Թույլատրել ուղղակի վաճառքի միջոցով օտարել համայնքային սեփականություն հանդիսացող շինությունները /հողամասերը/ տվյալ շինությունները կառուցողներին՝ ցուցակը համաձայն հավելվածի:
2. Շինությունների և հողամասերի օտարման գները սահմանել համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» N 912-Ն որոշմամբ սահմանված գների:

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

| ԿՈՂՄ | ԴԵՄ | ՁԵՌՆՊԱՀ՝ |
|---|---|---|
| | ՉԿԱ | ՉԿԱ |

Հ.ՊՈՂՈՍՅԱՆ

Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ

Ջ.ԶԱՐԳԱՐՅԱՆ

Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Մ.ՍԱՀԱԿՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Է.ԱՎԵՏԻՍՅԱՆ

20 հուլիսի 2011թ.
ք. Գյումրի

Հավելված
Գյումրու քաղաքային
համայնքի ավագանու
2011 թվականի հուլիսի 20-ի
N 111-Ա որոշման

# Ց ՈՒ Ց Ա Կ

## Ուղղակի վաճառքի միջոցով օտարվող համայնքային սեփականություն հանդիսացող շինությունների /հողամասերի/

| N | Հասցե | Շինությունը կառուցողի անուն ազգանուն |
|---|---|---|
| 1 | Հ. Ավետիսյան փող. N 32/3 | Սուսաննա Լաչինյան |
| 2 | Շիրակացի փող. N 15/8 | Աղավնի Քրդյան |
| 3 | Արագած փող. N 42/5 | Տանյա Ավետիսյան |
| 4 | Վ. Սարգսյան փող. 1-ին թաղ. N 77/2 | Ռուբիկ Քոթանչյան |
| 5 | Ռուսթավելի փող. 1-ին նրբ. N 55/1 | Օֆիկ Գալոյան |
| 6 | Բորյան փող. N 2/3 | Մովսեսյան Արմեն |
| 7 | Ծննդատան փող. N 4/7 | Տիգրան, Անժիկ, Ռաֆիկ, Մարիամ Ռաֆայել, Արփինե Մխիթարյաններ |
| 8 | Ռիժկովի փող. N 3/3 | Արտուշ և Տիգրան Պապանյաններ |

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ
ԲԱԺՆԻ ՊԵՏ-ԳԼԽԱՎՈՐ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ Հ.ԳԱՍՊԱՐՅԱՆ

Կատ. Պ.Զաքարյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

## ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏ

---

«_20_» _հուլիսի_ 2011թ. Արձանագրություն N _10_

ք.Գյումրի

# ՈՐՈՇՈՒՄ N _110-Ա_

### ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՎՆԱՍՈՎ ՀԱՅՑԱԳՈՒՄԱՐԻ ՄԻ ՄԱՍԸ ՆԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գյումրու քաղաքապետարանը հայցադիմում է ներկայացրել Շիրակի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան Գյումրի քաղաքի բնակիչներ Սերգո Գագիկի Պողոսյանից, Ժորա Համլետի Հակոբյանից, Ռուբիկ Սաշիկի Գրիգորյանից հանցագործության հետևանքով պատճառված նյութական վնասի փոխհատուցման նպատակով հօգուտ Գյումրու քաղաքապետարանի 9.575.000 ՀՀ դրամ բռնագանձելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալ անձանց ծանր սոցիալական վիճակը, գույքային և ընտանեկան դրությունը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 431-րդ հոդվածով՝

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Սերգո Գագիկի Պողոսյանից, Ժորա Համլետի Հակոբյանից, Ռուբիկ Սաշիկի Գրիգորյանից հանցագործության հետևանքով պատճառված նյութական վնասի փոխհատուցման նպատակով հօգուտ Գյումրու քաղաքապետարանի 9.575.000 ՀՀ դրամ բռնագանձելու գումարից ներել 6.575.000 ՀՀ դրամի չափով, հայցագումարը թողնել՝ 3.000.000 ՀՀ դրամ գումար :

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ Վ.ՂՈՒԿԱՍՅԱՆ

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ԿՈՂՄ

ԴԵՄ
ՉԿԱ

ՁԵՌՆՊԱՀ՝
ՉԿԱ

Հ.ՊՈՂՈՍՅԱՆ

Ա.ԲԱՂՐԱՄՅԱՆ

Չ.ԶԱՐԳԱՐՅԱՆ

Թ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Մ.ՍԱՀԱԿՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ.ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

Է.ԱՎԵՏԻՍՅԱՆ

20 հուլիսի 2011թ.
ք. Գյումրի